# ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 20-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

20.09.2011

Սիրելի հայրենակիցներ
Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս մեր գլխավոր պետական տոնի՝ Անկախության օրվա կապակցությամբ:
Այս օրը տոն է յուրաքանչյուր հայի համար: Բոլորս միասին տոնում ենք մի պանծալի իրադարձություն, որը հիմք դրեց մեր ժողովրդի դարավոր երազանքների ու ազգային նպատակների իրականացման համար:
Բավական չէ սոսկ անկախություն նվաճելը, այն պետք է պահպանել ու ամրապնդել, ամեն օր անել հնարավորն ու անհնարինը, որպեսզի անկախ ապրելու մեր իրավունքը դառնա անսասան իրողություն:
Արդեն 20 տարի է հայ ժողովուրդն ընթանում է իր անկախ պետականության ու զորացման, հայրենի երկրի շենացման ու զարգացման ճանապարհով:
Արդեն քսաներորդ անգամ մենք ազգովի տոնում ենք կարևորագույն իրադարձությունը՝ Հայաստանի անկախության տարեդարձը,և ամեն տարեդարձ բերում է նոր ձեռքբերումներ ու նոր հաղթանակներ, նոր հոգսեր ու նոր անելիքներ:
Համոզված եմ, որ մեր աշխատասեր ժողովրդի ջանքերով մեր հանրապետությունը ապագայում դառնալու է ժամանակակից տնտեսություն ունեցող ժողովրդավարական հզոր պետություն: Մեր ժողովուրդը ապրելու է արժանավայել ու բարեկեցիկ կյանքով:
Սիրելի հայրենակիցներ,կրկին շնորհավորում եմ բոլորիս այս մեծ տոնի առթիվ ու մաղթում խաղաղություն, բարօրություն և մեծագույն հաջողություններ՝ ի փառս մեր հայրենիքի պայծառ ու լուսավոր ապագայի:

ՀՀ Արարատի մարզպետ Էդիկ Բարսեղյան